ԴԱՍ 3

ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է 4 հատվածներից *(մոտիվացնող ներածական տեսանյութ, դասի տեսական նյութ, բառարան և ինքնաստուգիչ հարցեր), որի ընդհանուր տևողությունն է 240 րոպե։*

Սույն հեռաուսուցման դասի այս հատվածը յուրացնելու համար հարկավոր է 145 րոպե։

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս փաստաթղթում։ Դրանք առանձին փաստաթղթերով ներկայացված են հեռաուսուցման փաթեթում։

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

(հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում)

Կարդացեք երկրորդ դասի տեքստը և այն յուրացնելուց հետո միայն անցեք դասի հաջորդ մասերին (բառարան, ինքնաստուգիչ հարցեր):

Նախորդ դասի ընթացքում Ձեզ ներկայացվեց վճիռների կատարման պարտադիր բնույթը, նշվեցին պետության պարտավորությունների իրավական հիմքերը: Նաև խոսվեց իրավական որոշակի գործիքների, ներառյալ՝ սահմանադրական և կոնվենցիոն այն պահանջների մասին, որոնք առանցքային են ՄԻԵԴ վճիռների կատարման համատեքստում: Բացի դրանից, Ձեզ ներկայացվեց Նախարարների կոմիտեի վերահսկողության ընդհանուր բնութագիրը, ցույց տրվեցին դրա առանձնահատկությունները, ինչպես նաև խոսվեց Եվրոպայի խորհրդի որոշ քաղաքական հռչակագրերի մասին, որոնք կարևոր նշանակություն ունեն ՄԻԵԴ վճիռների կատարման կառուցակարգերի զարգացման համար:

Այս դասի ընթացում, նախ, Ձեզ ներկայացվելու են ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը, խոսվելու է Նախարարների կոմիտեի որդեգրած՝ վերահսկողության ստանդարտ և ուժեղացված ընթացակարգերի առանձնահատկությունների մասին: Ներկայացվելու է նաև, թե որն է վճիռների (վերահսկողության ներքո գտնվող գործերի) դասակարգման տրամաբանությունը, և ինչ դեր այդ դասակարգումը կարող է ունենալ վճիռների արդյունավետ կատարման ու դրա վերահսկողության համար: Դրա հետ մեկտեղ, այս դասի ընթացքում խոսվելու է գործողությունների ծրագրերի և հաշվետվությունների մասին, որոնք էապես կարևոր են ինչպես բուն վճիռները կատարելու, այնպես էլ պետության և ԵԽ կառուցակարգերի, հատկապես՝ Նախարարների կոմիտեի արդյունավետ փոխգործակցությունն ապահովելու համատեքստում:

3.1 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Նախորդ դասում նշվել ենք, որ ՄԻԵԴ վճիռների կատարման ողջ գործընթացի կոնվենցիոն հիմքը ՄԻԵԿ 46-րդ և 39-րդ հոդվածներն են: Այս հոդվածներն արդյունք են Կոնվենցիային կից թիվ 14 Արձանագրության, որն ընդունվեց 2004 մայիսին: Արձանագրության ընդունման նպատակն էր բարելավել ՄԻԵԴ գործունեության

արդյունավետությունը, նվազեցնել նրա, ինչպես նաև Նախարարների կոմիտեի՝ որպես ՄԻԵԴ վճիռների կատարման վերահսկողական մարմնի ծանրաբեռնվածությունը:

Արձանագրության ընդունումից կարճ ժամանակ անց՝ 2005 թվականի մայիսին, Վարշավայի գագաթնաժողովում ձևավորվեց, այսպես կոչված, **«Իմաստուն մարդկանց խումբը» (“Group of Wise Persons”), որի առաջ խնդիր էր դրվել մշակել ռազմավարություն և առաջարկել, թե ինչպես անել, որ Կոնվենցիայի վերահսկո- ղական մեխանիզմներն ունենան երկա- րաժամկետ արդյունավետություն:** 2006 թվականի նոյեմբերին Խումբը Նախարարների կոմիտեին ներկայացրեց իր զեկույցը, բայց այն, ըստ էության, անհետևանք մնաց, քանի որ թիվ 14 Արձանագրությունը դեռևս ուժի մեջ չէր մտնում (ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ էր, որ ԵԽ անդամ բոլոր պետություններն այն վավերացնեին):

Այս դասի «ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ» մասում Դուք կգտնեք «Իմաստուն մարդկանց խմբի» Նախարարների կոմիտեին ներկայացված զեկույցին հղումը:

Կարդացեք այն և պատաս- խանեք, թե, Ձեր գնահատմամբ, ՄԻԵԴ վճիռների կատարման և դրա նկատմամբ վերահսկողու- թյան վերաբերյալ ինչպիսի դրույթներ է այն պարունակում:

Արձանագրությունն ուժի մեջ մտավ միայն 2010 թվականի հունիսի 1-ից, երբ վերջին ԵԽ անդամ պետությունը՝ Ռուսաստանի Դաշնությունը, վավերացրեց այն:

Դա նոր շունչ հաղորդեց ամիսներ առաջ ընդունված Ինտերլակենի հռչակագրին, որով դրվեց ՄԻԵԴ վճիռների կատարման և դրա նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի զարգացման հիմքը (այս և ԵԽ քաղաքական մյուս հռչակագրերի մասին խոսվել է նախորդ դասի ընթացքում):

Գործնական մակարդակում նշված բարեփոխումները հանգեցրեցին մի քանի դրական զարգացումների:

Ուշադրություն դարձրեք, որ ՄԻԵԴ վճիռների վերահսկողության, այսպես կոչված, «twin-track» մեխանիզմը հայերեն տարբեր աղբյուրներում տարբեր տերմիններով է կիրառվում, օրինակ՝ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչության պաշտոնական կայքում «երկաստիճան», «Մարդու իրավունքների եվրոպական դատա- րանի վճիռների կատարումը Հայաստանում» ՀՀ փաստա- բանների պալատի 2013 թվականի ձեռնարկում՝ «երկուղի»: Սույն դասընթացի շրջանակում կկիրառվի «երկուղի» կամ «երկընթաց» տերմինը, որն առավել ամբողջական է բնութագրում վերահսկողության տվյալ մեխանիզմի բնույթը:

Այդ զարգացումներից վճիռների կատարման համատեքստում թերևս ամենակարևորը Նախարար- ների կոմիտեի՝ 2010 թվականին որդեգրած և 2011 թվականի հունվարի 1-ից գործող վերահսկողական նոր մեթոդներն են, որոնք արտա- հայտվում են ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերա- հսկողության ինքնատիպ՝ երկուղի կամ երկընթաց **(twin-track)** մեխանիզմի ներդրմամբ: Այդ մեխանիզմն արտահայտվում է երկու զուգընթաց՝ վերահսկողության ստանդարտ ընթացակարգի

(standard procedure) և ուժեղացված կամ խստացված ընթացակարգի (enhanced procedure) գործադրմամբ:

Իր բնույթով կարևոր կամ բարդ կատարում ենթադրող գործերի/վճիռների կատարման վերահսկո- ղությունն ընթանում է «ուժեղացված», իսկ մնացյալը՝ «ստանդարտ» ընթացակարգերով:

Ուժեղացված ընթացակարգով նախատեսվում է վերահսկել.

- վճիռներ, որոնք պահանջում են անհատական միջոցների անհապաղ իրականացում,
- պիլոտային վճիռներ,
- վճիռներ, որոնցով ՄԻԵԴ-ի կամ Նախարար- ների կոմիտեի կողմից վեր է հանվում կառուցված- քային (structural) և/կամ համակարգային (systemic) կամ այլ բարդ օրենսդրա- կան կամ պրակտիկայի խնդիր,
- միջպետական գանգատներով կայացված վճիռներ:

Ի՞նչ եք կարծում ո՞րն է պիլոտային վճիռը: Փորձեք ձևակերպել Ձեր պատասխանը:

Կայացվել ստանդարտ վերահսկողությունից անցում կատարել դեպի ուժեղացված վերահսկողություն:

3.2 ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

ՄԻԵԴ վճիռները կամ վերահսկողության ներքո գտնվող գործերը դասակարգվում են ըստ խմբերի, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապատասխան դասակարգմամբ բացահայտում են կրկնվող օրինաչափություններ: Այդ օրինաչափությունների մասին ճիշտ պատկերացումներն էլ բերում են քայլերի հերթականության ճշգրտման: **Սա շատ կարևոր է ներպետական մակարդակում վճիռների կատարման համար: Հետևաբար, պետության կողմից վճիռների/գործերի դասակարգումը պետական իրավասու մարմիններին օգնում է զատել համակարգային խնդիրները ոչ համակարգայիններից, առանձնացնել ընդհանուր և մասնավոր միջոցները, ճիշտ գնահատել սեփական ռեսուրսները և դրանք բաշխել ըստ առաջնահերթությունների:**

Գոյություն ունեն կատարման ենթակա ՄԻԵԴ վճիռների/գործերի դասակարգման մի քանի խումբ եղանակներ:

Նախ, տեղին է այս ենթաթեմայում էլ ընդգծել և հստակեցնել, որ բոլոր գործերի վերահսկողությունը կատարվում է ստան¬դարտ ընթացակարգի համաձայն, քանի դեռ որոշում չի կայացվել վերահսկողությունն իրականացնել ուժեղացված ընթացակարգով՝ հաշվի առնելով գործի առանձնահատկությունը: Այս առումով, դասակարգման խմբերից մեկը հենց ստանդարտ (standart) և ուժեղացված (enhanced) վերահսկողության ներքո գտնվող վճիռներն են: Ինչպես վերն արդեն ներկայացվել է, ուժեղացված կամ խստացված ընթացակարգով վերահսկվում են՝ 1) անհատական միջոցների անհապաղ իրականացում պահանջող վճիռը, 2) պիլոտային վճիռը, 3) կառուցվածքային (ընդհանուր) և/կամ համակարգային կամ այլ բարդ

խնդիր վեր հանող վճիռը, 4) միջպետական գանգատներով կայացված վճիռը: Եթե 1 ին, 2-րդ և 4-րդ ցուցիչների դեպքում դժվարություններ չեն առաջանում, ապա 3 րդի մասով խնդիրը փոքր-ինչ այլ է՝ հատկապես, որ «համակարգային և/կամ բարդ խնդիրներ» արտահայտությունը երբեմն տարբերվող գնահատականների տեղիք կարող է տալ: Բոլոր դեպքերում, այս դասակարգումը կարևոր է տարբերակելու համար ստանդարտ և ուժեղացված ընթացակարգերով վերահսկողության ենթակա վճիռները/գործերը:

Ուսումնասիրեք պիլոտային վճիռների վերաբերյալ ուղեցույցը (տե՛ս https://bit.ly/3EUSzDq հղումը) և պատասխանեք հետևյալ հարցերին՝ 1) ո՞ր պետությունների դեմ գործերով է ՄԻԵԴ-ը պիլոտային վճիռներ կայացրել ներպետական դատական ակտերի կատարման հետ կապված խնդիրներով, 2) ի՞նչ է արձանագրվել այդ վճիռներով:

Տվյալ մասով առանձին ուշադրության են արժանի պիլոտային (pilot) վճիռները: Վերջին տարիների ընթացքում միևնույն համակարգային խնդրին առնչվող գանգատների հոսքին դիմակայելու նպատակով՝ ՄԻԵԴ-ը ներդրել է պիլոտային վճիռների ընդունման ընթացակարգ: Համաձայն այդ ընթացակարգի՝ ՄԻԵԴ-ը քննում է նույն խնդրին վերաբերող բազմաթիվ դիմումներից մեկը կամ երկուսը՝ հետաձգելով նմանատիպ գանգատների քննությունը: Երբ պիլոտային գործով կայացվում է վճիռ, ՄԻԵԴ-ը պատասխանող պետությանը տալիս է հնարավորություն (ու ժամանակ) և կոչ է անում ներպետական օրենսդրությունը համապատասխա- նեցնել Կոնվենցիային՝ մատնանշելով դրա համար անհրաժեշտ ընդհանուր միջոցառումները:

ՕՐԻՆԱԿ՝ ՄԻԵԴ-ն առաջին անգամ պիլոտային վճիռ է ընդունել Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի (Broniowski v. Poland) 2004 թվականի գործով, որը վերաբերում էր Արևմտյան Բուգ գետից այն կողմ գտնվող սեփականությունից զրկման խնդրին: Այն առնչվում էր 80 000 անձանց և ՄԻԵԴ ներկայացված 167 գանգատների:

Պիլոտային վճիռները, փաստորեն, կայացվում են **կրկնվող** (repetitive) գործերով:
Ընդհանրապես՝ պետք է հատուկ ընդգծել, որ գործերի կամ վճիռների դասակարգումը կարևոր միջոց է վերահսկողության համակարգի գործունեությունը հստակեցնելու համար: Եվ այստեղ շատ կարևոր է առաջին հերթին հասկանալ, թե որոնք են կրկնվող գործերը, որոնք են **առաջնորդող** (leading) գործերը (որոշ աղբյուրներում անվանվում են՝ «առաջատար գործեր»), և որոնք են **մեկուսի** (isolated) գործերը:
Ընդունված է համարել, որ դասակարգման հիմնական նպատակն «առաջնորդող գործերի» բացահայտումն է, այսինքն՝ այն գործերի, որոնք բացահայտում են բարդ կամ հաճախ կառուցվածքային/համակարգային նոր խնդիրներ: Դրանք ենթադրում ու պահանջվում են ընդհանուր բնույթի նոր ու համակարգված միջոցների ձեռնարկում:

ՕՐԻՆԱԿ՝ Հայաստանի վերաբերյալ կայացված գործերից «առաջնորդող» է համարվում Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի (Chiragov and Others v. Armenia) Մեծ պալատի 2015 թվականի վճիռը, որով ՄԻԵԴ-ն արձանագրել է, թե Հայաստանն «արդյունավետ վերահսկողություն» (effective control) է իրականացնում Արցախի նկատմամբ:

Կարդացեք Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի վճիռը և պատասխանեք, թե ինչպիսի հանգամանքների հաշվառմամբ է ՄԻԵԴ-ն արձանագրել Արցախի նկատմամբ Հայաստանի «արդյունավետ վերահսկողությունը» (հայերենով վճռի հղումը հասանելի է սույն դասի «ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ» բաժնում:

«Առաջնորդող» չճանաչված գործերը կա՞մ «կրկնվող» են (քանի որ դրանցով ծագում է համակարգային խնդիր, որն արդեն իսկ բացահայտվել է նախկինում քննված որևէ «առաջնորդող» գործի շրջանակում), կա՞մ «մեկուսի» են (քանի որ խախտումները պայմանավորված են կոնկրետ գործի կոնկրետ հանգամանքներով):

3.3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԻԵԴ վճիռն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում պատասխանող պետությունը պարտավոր է Նախարարների կոմիտեին ներկայացնել **գործողությունների ծրագիր** (action plan) կամ **գործողությունների հաշվետվություն** (action report):

Գործողությունների ծրագրի կամ հաշվետվության ընտրությունը պայմանավորված է հետևյալ հարցով. արդյո՞ք պետության գնահատմամբ դեռ մնում են միջոցներ, որոնք ենթակա են ձեռնարկման, թե՞ տվյալ պահի դրությամբ հնարավոր և անհրաժեշտ ու բավարար բոլոր միջոցները ձեռնարկված են:

Նախարարների կոմիտեին ներկայացվում է գործողությունների ծրագիր՝ ծրագրված և/կամ իրականացված միջոցառումների մասին:

Այս փուլում Կոմիտեի վերահսկողությունը ֆորմալ բնույթի է և ներառում է միայն ստուգում իրականացնելը, որպեսզի գործողությունների ծրագիրը ժամանակին ներկայացվի: Գործողությունների ծրագիրը ստանալուց հետո Նախարարների կոմիտեի քարտուղարությունը (վճիռների կատարման մասով այդ դերն ըստ էության կատարում է ՄԻԵԴ վճիռների կատարման դեպարտամենտը) ուսումնասիրում է ծրագրում առաջարկվող բոլոր գործողությունները և դրանց համար նախատեսվող ժամանակացույցը: Անհրաժեշտության դեպքում՝ քարտուղարությունը կապի մեջ է մտնում պետության հետ (Հայաստանում քարտուղարության հետ կոնտակտային մարմինը Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակն է)՝ պարզաբանումների կամ ճշգրտումների համար: Այս հատվածում քարտուղարությունը կարող է պետությանը ներկայացնել ծրագրի կետերի վերաբերյալ առաջարկներ

և նկատառումներ: **Որոշ ժավալուն հարցերի վերաբերյալ համատեղ կլոր-սեղան քննարկումների կամ սեմինարների կազմակերպումը նույնպես արդյունավետ գործիք է, քանի որ դրանց կարող են մասնակցություն ունենալ ավելի լայն շրջանակի իրավասու մարմիններ, այդ թվում՝ դատախազությունը և դատական իշխանության մարմինները:** Պետության հետ գործողությունների ծրագրի վերաբերյալ վերջնական համաձայնություն ձեռք բերելուց հետո՝ քարտուղարությունն առաջարկում է Նախարարների կոմիտեին առաջիկա նիստերից մեկում (գործողությունների ծրագիրը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում) ընդունել ծրագիրը:

Գործողությունների հաշվետվություն ուղարկվում է, եթե արդեն իսկ իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ և, ըստ պատասխանող պետության, դրանք բավարար են համարելու համար, որ վճռի կատարումը ենթակա է փակման: Այլ կերպ ասած՝ երբ պետությունը գտնում է, որ ծրագրի անհրաժեշտությունը բացակայում է կամ ծրագրի կետերը կատարված են, քարտուղարություն է ներկայացնում գործողությունների հաշվետվություն:

Քարտուղարությունն ուսումնասիրում է գործողությունների հաշվետվությունը, և եթե գտնում է, որ պետությունը կատարել է անհրաժեշտ և բավարար բոլոր միջոցները, զեկույցը ներկայացնելուց հետո վեց ամսվա ընթացքում դիմում է Նախարարների կոմիտեին՝ առաջարկելով առաջիկա նիստում կայացնել վճռի կատարման և վարույթի ավարտման/փակման *(closure)* մասին որոշում **(ներքևում ներկայացված աղյուսակում պատկերավոր նկարագրված է տվյալ գործընթացը):**

Ամփոփելով նաև նկատենք, որ գործողությունների ծրագրերը և հաշվետվությունները Կոնվենցիայով ամրագրված սուբսիդիարության սկզբունքի գործնական արտահայտությունն են: Դրանք, Նախարարների կոմիտեի գնահատմամբ, վճիռների կատարման համար «ավելացված արժեք» *(added value)* են և իրավամբ հանդիսանում են 2011 թվականից ներդրված նոր երկուղի մեխանիզմի հիմքերից մեկը:

<table>
<tr><th colspan="4">ՎՃԻՌՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ</th></tr>
<tr><td colspan="4">6 ամիս հետո
ՎՃԻՌՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է</td></tr>
<tr><th colspan="4">ՎՃՌԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ</th></tr>
<tr><th colspan="2">ՍՏԱՆԴԱՐՏ</th><th>ՓՈԽԱՆՑՈՒՄ</th><th>ՈՒԺԵՂԱՑՎԱԾ</th></tr>
<tr><td>6 ամիս</td><td>6 ամիս</td><td></td><td></td></tr>
<tr><td>Գործողությունների ծրագիրը ներկայացված է</td><td>Գործողությունների հաշվետվությունը ներկայացված է</td><td rowspan="2">▪ Եթե ծրագիրը/հաշվետվությունը ներկայացված չէ, ապա ուղարկվում է հիշեցում
▪ Եթե կրկին ներկայացված չէ
▪ Եթե ներկայացված է, բայց պետության և քարտուղարության մոտեցումները տարբերվում են
▪ Եթե ծրագրում նշված միջոցների կատարումը խիստ ձգձգվում է
▪ Եթե Նախարարների կոմիտեն բավարարված է ներկայացված ծրագրով և/կամ կատարված միջոցների արդյունքով
▪ Վճռի կատարման համար խոչընդոտները վերացված են
▪ Հրատապ կատարման ենթակա միջոցները կատարված են</td><td rowspan="2">Պետությունը և քարտուղարությունը սերտորեն համագործակցել են վճռի կատարման ընթացքում (Գործողությունների ծրագրերը պատրաստվել և կատարվել են, Նախարարների կոմիտեն պատշաճ տեղեկացված է եղել)</td></tr>
<tr><td colspan="2">Միջոցներ ձեռնարկելու համար ժամանակահատված</td></tr>
<tr><td>Գործողությունների հաշվետվությունը ներկայացված է (պետությունը հայտնել է, որ անհրաժեշտ միջոցները ձեռնարկված են. գործը պատրաստ է փակման)</td><td>Գործը փակված է (առաջիկա Մարդու իրավունքների (CM-DH) նիստում, բայց ոչ ավելի, քան 6 ամսվա ընթացքում)</td><td></td><td></td></tr>
<tr><td>Գործը փակված է (առաջիկա Մարդու իրավունքների (CM-DH) նիստում, բայց ոչ ավելի, քան 6 ամսվա ընթացքում)</td><td></td><td></td><td>Գործը փակված է</td></tr>
</table>

Նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների նիստերի (CM-DH meetings) մասին խոսվելու է Դաս 4-ի ընթացքում:

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 50 րոպե:

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին (կոնցեպտներին), իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

ԲԱՌԱՐԱՆ

Վերահսկողական նոր մեթոդներ	Նախարարների կոմիտեի որդեգրած նոր ընթացակարգեր, որոնք 2011 թվականի հունվարից կիրառվում են ՄԻԵԴ վճիռների կատարումը վերահսկելիս:
Վերահսկողության երկուղի/երկընթաց մեխանիզմ	Համակարգ, ըստ որի՝ բոլոր գործերի վերահսկողությունը կատարվելու է ստանդարտ ընթացակարգի համաձայն, քանի դեռ, հաշվի առնելով գործի առանձնահատկությունը, որոշում չի կայացվում վերահսկողությունն իրակա- նացնել ուժեղացված ընթացակարգով:
Գործողությունների ծրագիր	Նախարարների կոմիտե պատասխանող պետության ներկայացրած փաստաթուղթ, որում մոտավոր ժամանակացույցի հետ միասին շարադրվում են այն քայլերի մանրակրկիտ թվարկումը, որոնք պետությունը ձեռնարկելու է ՄԻԵԴ վճիռը լիարժեք կատարելու համար:
Գործողությունների հաշվետվություն	Նախարարների կոմիտե պատասխանող պետության ներկայացրած փաստաթուղթ, որում շարադրվում են այն քայլերը, որոնք արդեն ձեռնարկվել են և հիմնավորվում է, որ դրանք անհրաժեշտ ու բավարար են ՄԻԵԴ վճիռը կատարված ճանաչելու համար:
Վճիռների/գործերի դասակարգում	Կարևոր միջոց, որը հստակեցնում է վճիռների կատարման վերահսկողական համակարգի գործունեությունը, իսկ պատասխանող պետությանն օգնում է զատել համակարգային խնդիրները ոչ համակարգայիններից, առանձնացնել ընդհանուր ու մասնավոր միջոցները, ճիշտ գնահատել սեփական ռեսուրսները և դրանք բաշխել ըստ առաջնահերթությունների:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Կարդացեք լրացուցիչ նյութերը՝ որքանով հնարավորություն է տալիս օտար լեզվի Ձեր իմացությունը: Սա չի նշանակում, որ առանց տվյալ նյութերի ընթերցման հնարավոր չէ լիարժեք յուրացնել դասի բովանդակությունը, բայց նշված լրացուցիչ աղբյուրները կօգնեն առավելապես պատրաստված լինել մյուս դասերին, ինչպես նաև վեր հանել նոր հարցեր և մտածել դրանց շուրջ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Report of the Group of Wise Persons to the Committee of Ministers, CM(2006)203, 15 November 2006, — «Իմաստուն մարդկանց խմբի» այս զեկույցում տեղ են գտել նաև ՄԻԵԴ վճիռների կատարման առնչվող դրույթներ:

https://bit.ly/39cIJAT

Supervision of the execution of judgments of the European Court of Human Rights, Annual Report 2010, — Նախարարների կոմիտեի տարեկան այս զեկույցում տեղ ենք գտել կարևոր տեղեկություններ և վերլուծություն 2010 թվականին ուժի մեջ մտած՝ Կոնվենցիային կից թիվ 14 Արձանագրության, ինչպես նաև և նույն տարում ընդունված՝ ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողական նոր մեթոդների վերաբերյալ:

https://bit.ly/3vNrCNW

Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի (Chiragov and Others v. Armenia), — ՄԻԵԴ Մեծ պալատի այս վճռով ճանաչվել է Արցախի նկատմամբ Հայաստանի «արդյունավետ վերահսկողությունը», ինչը դրա կատարման գործընթացում առաջացրել է հավելյալ բարդություններ:

https://bit.ly/3voLVlv